



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՅԻՒՍՈՒՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA  
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԼՆՍ ԱՆՁԵԼԸՆԻ ԻՐ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

### ԴԵՍՊԱՆ ԹԱՂԹՈՒ ՄԱՐԳԱՐԵԱՆ ԱՅՅԵԼԸՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՅՅԵԼԵՑ

Լու Անձելըս իր այցելութեան առիթով, Ուաշինգթոնի մօտ Հայաստանի դեսպան Տիար Թաթուլ Մարգարեան ծաբաթ, 17 Մայիսին այցելեց Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու ժողովականութեան Ներկայացուցիչներուն կողմէ: Դեսպանին կ'ընկերանային իր ազնիւ տիկինը եւ Լու Անձելըսի մօտ Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Արքին Լիլոյեան:

Հանդիպումին ներկայ եղան Կիլիկեան միաբանութեան երեց անդամներն Բարձր. S. Եփրեմ Արք. Թապագեան, Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, հոգեւորականաց դասու, Ազգային վարչութեան, Ազգային վարժարաններու Խնամակալ Մարմինի, Տիկնանց Օժանդակ Մարմինի Ներկայացուցիչներ եւ «Հայաստան» Համահայկական Յիմնադրամի Լու Անձելըսի բաժանմունքի տնօրէն Տիկին Մարիա Միհրանեան:

### ՈՂԶՈՅՆԻ ԽՕՍՔԵՐ

Առաջնորդ Սրբազանը յարգելի հիւրերը ողջունեց, ըսելով, որ անոնք կը գտնուին Ազգի Տան մէջ, որ իր բոլոր միաւորներով անվերապահորն զօրակից է Հայաստանի պետութեան ու նեցուկ կը կանգնի հայրենի ժողովուրդին:

Տիար Արքին Լիլոյեան շնորհակալութիւն յայտնեց հիւրընկալման համար, նշեց, որ դեսպան Մարգարեանի համար Ազգ. Առաջնորդարան այցելութիւնը կարեւոր հանգրուան է Լու Անձելըս իր այցելութեան ծիրին մէջ, նկատի ունենալով մեր Թեմիս ու ընդհանրապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան զօրակցութիւնը՝ Հայաստանին ու հայրենի ժողովուրդին: Ան այս առիթով անգամ մը եւս շնորհաւորեց Առաջնորդ Սրբազանը, որ շաբաթ մը առաջ, չորրորդ քառամեակի մը համար Առաջնորդ ընտրուած էր Ազգ. Երեսփոխանական ժողովին կողմէ:

Դեսպան Թաթուլ Մարգարեան իր կարգին շնորհակալութիւն յայտնեց հիւրընկալումին համար, շնորհաւորեց Ազգ. Առաջնորդարանի նոր շենքը եւ

Վեր առաւ շինարարութեան ոգիին կարեւորութիւնը՝ ազգի յառաջդիմութեան մէջ: Ան դրուատիքով արտայայտուեցաւ Առաջնորդ Սրբազնին ու Ս. Աթոռոյս կեցուածքին մասին, որ վերահաստատուեցաւ Յայաստանի վերջին ծանօթ դեպքերուն առիթով, կեցուածք՝ որ արտայայտութիւն էր մեր պետականութեան արժեքին ու անվտանգութեան խոր գիտակցութեան: Ան այս առիթով Առաջնորդ սրբազնը շնորհաւորեց չորրորդ քառամեակի մը համար Առաջնորդ իր վերընտրութեան համար:

## «ՅԻՄԱՅԱՐՑԵՐՈՒ ԳԾՈՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒԱԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ»

Յիւր դեսպանը այս առիթով խօսեցաւ նաեւ հայրենի իշխանութիւններուն որդեգրած քաղաքական վարքագիծին ու պետականութիւնը ամրակայելու աշխատանքին մասին, միաժամանակ պատասխանելով ներկաներու հարցումներուն:

Ան առաջին հերթին նկատել տուաւ, որ նախագահ Սերժ Սարգսեանի իշխանութիւնը ընդհանուր գիծերու մէջ կը շարունակէ այս քաղաքականութիւնը, որ որդեգրուած էր նախորդ իշխանութեան օրով, թէեւ կան նաեւ նոր ուղղութիւններ ու զարգացումներ: Ան շեշտեց, որ Յեղասպանութեան հարցը առաջնահերթ տեղ ունի Յայաստանի արտաքին քաղաքականութեան մէջ, ինչպէս որ էր նախագահ Ռ. Քոչարեանի օրով, ինչ որ ցոյց կու տայ, թէ այս կեցուածքը պատահականութեան արդիւնք չէ, այլ մշտական ուղեգիծ: Ան նշեց, որ Յայաստան կը ցանկայ Թուրքիոյ հետ յարաբերութիւնները դարձնել բնականն, սակայն ոչ՝ ի հեճուկս Յեղասպանութեան գծով կեցուածքին, ոչ ալ զայն կապելով այս ու այլ հարցերու:

Խօսելով Արցախի մասին, դեսպան Սարգարեան յայտնեց, թէ Յայաստանի քաղաքականութիւնը այս գծով ալ յստակ է ու շարունակութիւնը՝ ծանօթ վարքագիծին. «Զիշումի հարց չի կրնար ըլլալ, այլ այն փաթեթը, որ կար նախորդ իշխանութեան օրով, կը մնայ սեղանի վրա», ընդգծեց ան, աւելցնելով, որ Արցախի հնքնորոշման եւ իրաւունքներու կենսագործումը կը մնան հիմնական առաջարրանք:

## «ԴԺՈՒԱՐՈՒԹԵԱՆՑ ԶԱՐԱԾԱՐՈՒՄԸ ԱՆԹՈՅԵԼԱՏՐԵԼԻ»

Շարունակելով իր խօսքը, հայրենի դեսպանը յայտնեց, թէ Յայաստանի մէջ ամեն բան գոհացուցիչ չէ, կան ընկերային ու տևական դժուարութիւններ, ինչպէս՝ այլ երկիրներու մէջ, որոնք պետք է դարմանուին ու ընկերային արդարութիւն հաստատուի, սակայն ծանօթ դժուարութիւններուն չարաշահումն ու վնասաբեր վիճակներու ստեղծումը ոչ մէկ ձեւով արդարանալի է կամ թոյլատրելի, իշխանութիւնները ամեն ճիգ ի գործ կը դնեն, որ պետութեան հիմքերը մնան հաստատ, հեռու՝ վտանգներէ եւ չարաշահումներէ: Այս մօտեցումով ալ, ըսաւ ան, ձեր կեցուածքները բարձր կը գնահատուին ու մեծապէս նպաստեցին Յայաստանի դէմ քարոզչութիւն կատարողներուն հրապարակ նետած

Վարկածներն ու չարախօսութիւնները հակաշռելու, բացասական հետեւանքները կանխելու գործին:

Դեսպան Թ. Մարգարեան լուսաբանութիւններ տուաւ նաեւ Յայաստանի ներկայ իրավիճակին ու ակնկալուած արտաքին օժանդակութեանց վերաբերող բանակցութիւններուն մասին: Ան վստահեցուց, որ ապահովութեան վիճակը ամբողջականորեն գոհացուցիչ է, հայրենի իշխանութիւնները աշխատանք կը տանին, որպեսզի բացասական քարոզութեանց հետեւանքները դարմանուին, հասկացողութիւն ստեղծուի, որ իշխանութիւնը խաղաղութիւն եւ անվտանգութիւն հաստատելու իր գործին մեջ խոչընդոտումներու պետք չէ Ենթարկուի, երկրին ու ժողովուրդին խոստացուած արտաքին օժանդակութիւնները, օրինակ՝ ամերիկեան նպաստը իրագործուի, Ենթակայ չդառնայ ծանօթ շրջանակներու չափազանցեալ ու անհիմն քարոզութեան: Ան այս ծիրին մեջ անդրադարձաւ նաեւ Ազրպեյճանի իշխանութիւններուն շղթայագերծած քարոզական արշաւներուն ու զինուորական որոշ գործողութիւններուն, որոնք զուգահեռ ընթացան Յայաստանի տագնապալի օրերուն, սակայն նաեւ Վերահաստատեց, որ Արցախի ու Յայաստանի պետութիւններն ու ուժերը ամուր կը մնան իրենց դիրքերուն վրայ, սահմաններու անվտանգութիւնը ապահովուած է ու ազերիական թէ այլ քարոզական փորձերը կը մնան անհետեւանը:

Առաջնորդ Սրբազնը շնորհակալութիւն յայտնեց հայրենի դիւանագետին բացատրութիւններուն համար եւ Վերահաստատեց մեր Ս. Կթորին ու կիլիկեան բոլոր թեմերուն զօրակցութիւնը՝ ի նպաստ հայրենիքին ու պետութեան: Ան այս առիթով յուշանուեր մը յանձնեց դեսպան Մարգարեանի:

Պաշտօնական հանդիպումին ու մտերմիկ գորոյցի աւարտին, տեղի ունեցաւ պատշաճ հիւրընկալում, զոր պատրաստած էր Տիկնանց Օժանդակ Մարմինը: Այսուհետեւ, դեսպանն ու ընկերակիցները ծանօթացան Ազգ. Առաջնորդարանի բաժանմունքներուն, ինչպէս նաեւ վայելեցին «Տիգրան Եւ Զարուհի Տէր Ղազարեան» սրահին մեջ տեղի ունեցող նկարչական ցուցահանդեսը:

## AMBASSADOR TATOUL MARKARIAN VISITS THE PRELACY

On the morning of Saturday, May 17<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy the Ambassador of the Republic of Armenia to the United States His Excellency Tatoul Markarian. The Ambassador was accompanied by his wife and Consul General of Armenia the Honorable Armen Liloyan. H.E. Archbishop Yeprem Tabakian, Central Executive Council member Mr. Khajag Dikijian, Religious and Executive Council members, Board of Regents representatives, Ladies Auxiliary members, and Armenia Fund president Mrs. Maria Mehranian were also present.

The Prelate welcomed the guests and asserted that the Prelacy stands behind and supports the Republic of Armenia in any challenges it may face.

Consul General Liloyan thanked the Prelate for the warm reception and stressed that the visit of the Ambassador to the Prelacy is an important one considering the support of the Catholicosate of the Great House of Cilicia and the Western Prelacy for Armenia and the Armenian nation. He also once again congratulated the Prelate on his re-election for a fourth term.

The Ambassador also conveyed his thanks to the Prelate for the reception and congratulated him on his re-election and for the new headquarters, and spoke highly of the staunch support of the Catholicosate towards Armenia, as reaffirmed during the recent unrest. Ambassador Markarian imparted to the guests the course of the new government, noting that President Serzh Sargsyan will largely continue the policies set forth by the previous administration. He stressed that the Genocide is still the top priority in the foreign affairs of the government as it was with President Robert Kocharian. With regards to Artsakh, he stated that the policy remains the same, which is that the right of self-determination remains a priority. The Ambassador also spoke of the social and economic difficulties facing Armenia.

Ambassador Markarian then reported on the current situation in Armenia and specifically of foreign aid to the country. He affirmed that the country is safe and secure and that the governments of Armenia and Artsakh have secured their borders against any attempts by the Azeris.

The Prelate thanked the Ambassador for his explanations and presented him with a memento. A reception organized by the Ladies Auxiliary ensued, after which the Ambassador and guests were familiarized with the various departments of the Prelacy.